

տկարացեալ 'ի դառն վշտաց ժամանակին անկաւ 'ի մահիճս, եւ ոչ կարէր այլ եւս վարել զպաշտօն իշխանութեան իւրոյ, որոյ վասն ժողովեալ զմիաբանս իւր, առաջի ամենեցուն աւանդեաց զվերջին կտակն պատուիրելով նոցա կալ մնալ ընդ միմեանս սիրով եւ խաղաղութեամբ, գործել միաբան խորհրդով եւ աջակցութեամբ իրերաց 'ի պահպանութիւն ազգային սեփականութեանց, արթուն կալ ընդդէմ նենգութեան եւ յափշտակութեան օտարաց: Եւ ապա խոստովան եղեւ առաջի ամենեցուն թէ՛ ամենայն ինչք եւ ստացուածք իւր, մինչեւ ցյետին պատմութեան եւ վերարկու, եւ սեփականութիւնք Աթոռոյն, զորս նուիրեալ են բարեպաշտ ազգայինք իրրեւ ողորմութիւն: Եւ զկնի մահուան իւրոյ՝ ոչ ոք յազգականաց եւ 'ի ժառանգաց եւ կամ յայլոց՝ ունի իրաւունս պահանջել 'ի միաբանութենէ եւ կամ յԱթոռոյն զիրս ինչ մինչեւ ցյետին դանկ մի. զայս ամենայն ետ գրել միաբանաց՝ եւ իրրեւ մուրհակ հաստատեաց կնքով իւրով առաջի բազմութեան: Եւ յանձն արար զկառավարութիւն Աթոռոյն՝ եւ զյանձանձանս միաբանութեան ցնովճաննէս Եպիսկոպոսն Աթոռակալ, եւ պատուիրեաց ամենեցուն ճանաչել զառհայր եւ հնազանդիլ իրրեւ գլխոյ իւրեանց, եւ կամակար յօժարութեամբ աջակցիլ գործոց նորին 'ի շինութիւն եւ 'ի պայծառութիւն Ս. Տանն: Եւ 'ի վախճանի իւրոյ՝ թաղել զմարմինն 'ի վանս Ս. Փրկչի ըստ սովորութեան 'ի կտրգս առաջին Պատրիարքաց. եւ միաբանք հաճութեամբ ընկալան զվերջին կտակ նորին, եւ միաբան գրեցին 'ի Կոստանդինուպօլիս առ Յակոբ Պատրիարք եւ առ գլխաւորս ազգին, զի հրովարտակաւ Արքայի հաստատեսցեն զխոխանորդութիւնն Յովճաննէս Եպիսկոպոսի ցընարութիւննոր Պատրիարքի՝ եւ զայլ բանս կտակին: Եւ զի 'ի նմին ժամանակի կային 'ի մեծի երկիւղի յերեսաց այլազգեաց վասն թաղելոյ զմարմին Պատրիարքի 'ի վանս Ս. Փրկչի, զի յայսպիսի դէպս պահանջէին նոքա զյոլով դրամս եւ հասուցանէին բազում չարիս, որոյ վասն խնդրեցին տալ գրեւ 'ի հրովարտակին՝ չգործել այլազգեաց զանպատեհս ինչ: Ի հասանիլ թղթոյն 'ի թագաւորեալ քաղաքն, Յակոբ Պատրիարք ինքնին մատուց գիր աղաչանաց 'ի Դուռն, եւ